



ՀԱՄԱՁԳԱՅԻՆ
ՀԱՅ ԿՐԹԱԿԱՆ ԵՒ
ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՄԻՈՒԹԵԱՆ

ԳԱՆԱՏԱՅԻ ՇՐՋԱՆԻ
ՆԵՐՔԻՆ ԿԱՆՈՆԱԳԻՐ

Որդեգրուած
35-րդ Շրջանային ժողովին կողմէ
2015 օգոստոս

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

ՆԱԽԱԲԱՆ	էջ 3
1. ԱՆՈՒՆ, ՏԱՐԲԵՐԱՆՇԱՆ, ԲՆՈՐՈՇՈՒՄ	էջ 4
2. ԱՌԱՔԵԼՈՒԹԻՒՆ ԵՒ ՆՊԱՏԱԿ	էջ 4
3. ԳՈՐԾՈՒՆԷՈՒԹԵԱՆ ՄԻՋՈՑՆԵՐ	էջ 4
4. ԱՆԴԱՄԱԿՑՈՒԹԻՒՆ	էջ 6
5. ԿԱՌՈՅՑ	էջ 7
6. ՆԵՐՔԻՆ ԿԱՆՈՆԱԳԻՐՆԵՐ	էջ 12
7. ՄԱՍՆԱՃԻԴ	էջ 13
8. ՄԱՍՆԱՃԻԴԱՅԻՆ ԺՈՂՈՎՆԵՐ	էջ 14
9. ՄԱՍՆԱՃԻԴԱՅԻՆ ՎԱՐՉՈՒԹԻՒՆ	էջ 16
10. ՄԻԱԻՈՐՆԵՐ	էջ 18
11. ՇՐՋԱՆԱՅԻՆ ԺՈՂՈՎ	էջ 18
12. ՇՐՋԱՆԱՅԻՆ ՎԱՐՉՈՒԹԻՒՆ	էջ 21
13. ՊԱՏԳԱՄԱԻՈՐԱԿԱՆ ԺՈՂՈՎ	էջ 23
14. ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹԻՒՆ	էջ 25
15. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԿԱՆՈՆՆԵՐ	էջ 27
16. ՀԱՇՈՒԱԿԱՆ	էջ 28
17. ԿԱՆՈՆԱԳՐԱՅԻՆ ՓՈՓՈԽՈՒԹԻՒՆՆԵՐ	էջ 29
<u>ՅԱԻԵԼՈՒԱԾ</u>	
ԺՈՂՈՎԱՎԱՐԱԿԱՆ ԿԱՆՈՆՆԵՐ	էջ 30

ՆԱԽԱԲԱՆ

Համազգայինը, հանդիսանալով Հ.Յ. Դաշնակցութեան գաղափարականին դրօշակիր եւ անոր հովանաւորութիւնը վայելող միութիւն, մշակոյթի ճամբով իր մասնակցութիւնը կը բերէ Հայ Դատի աշխատանքներուն:

Համազգայինը հիմնուած է Գահիրէի մէջ, 28 մայիս 1928-ին՝ Հայ յեղափոխական դաշնակցութեան որոշումով՝ **Հայ կրթական եւ հրատարակչական համազգային ընկերութիւն** անունով. ապա, մասնաճիւղեր ստեղծուած են Եգիպտոսի, Սուրիոյ եւ Լիբանանի մէջ : Սկիզբը Կեդրոնական վարչութիւնը հաստատուած է Գահիրէ:

Համազգայինը 1930-ին Պէրոյի մէջ հիմնած է **Հայ Ճեմարանը**՝ գլխաւորաբար Լեւոն Շանթի եւ Նիկոլ Աղբալեանի ջանքերով, ապա հոն փոխադրած է նաեւ իր կեդրոնը:

Ժամանակի ընթացքին Համազգայինի գործունէութիւնը ծաւալած է ու ընդգրկած Սփիւռքի գրեթէ ամբողջ տարածքը:

Համազգայինի Ա. պատգամաւորական ժողովին, գումարուած Աթենքի մէջ 1990-ի օգոստոսին, միութեան անունը կը ստանայ իր ներկայ տարագումը՝ **ՀԱՄԱԶԳԱՅԻՆ ՀԱՅ ԿՐԹԱԿԱՆ ԵՒ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՄԻՈՒԹԻՒՆ**: Նաեւ, այդ թուականէն սկսեալ, Համազգայինը օժտուած է ընտրովի կեդրոնական վարչութեամբ:

Համազգայինի Կեդրոնական վարչութեան պատասխանատութեան տակ կը գործեն հետեւեալ հաստատութիւնները՝

- Մելանգթոն եւ Հայկ Արսլանեան ճեմարանը, Պէրոյի
- Նշան Փալանճեան կեդրոնը, Պէրոյի
- Մարսիլիոյ ճեմարանը
- Վահէ Սէթեան տպարանը, հրատարակչականն ու գրախանութիւնը,
- Բագին եռամսեան,
- Համազգայինի Լիսի Թիթիւնճեան ցուցասրահը,

Համազգայինի բազմաթիւ այլ հաստատութիւնները կը գործեն Շրջանային վարչութիւններու պատասխանատութեան տակ:

Համազգայինի կայքէջը կարելի է այցելել հետեւեալ վայրին վրայ՝

www.hamazkayin.com

1. ԱՆՈՒՆ, ՏԱՐԲԵՐԱՆՇԱՆ, ԲՆՈՐՈՇՈՒՄ

Յօդ. 1.1 - Միութիւնը կը կոչուի ՀԱՄԱԶԳԱՅԻՆ ՀԱՅ ԿՐԹԱԿԱՆ ԵՒ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՄԻՈՒԹԻՒՆ (ՀՀԿՄՄ), կրճատ՝ ՀԱՄԱԶԳԱՅԻՆ:

Յօդ. 1.2 – ՀԱՄԱԶԳԱՅԻՆի անունը այլ լեզուներու կը թարգմանուի ըստ տեղական պայմաններուն՝ Կեդրոնական վարչութեան վաւերացումով:

Յօդ. 1.3 – ՀԱՄԱԶԳԱՅԻՆի պաշտօնական տարբերանշանն է՝



Յօդ. 1.4 – ՀԱՄԱԶԳԱՅԻՆը հայութեան կրթական ու մշակութային նպատակները հետապնդող, ոչ-շահութաբեր կազմակերպութիւն է, ու կը ղեկավարուի ժողովրդավար սկզբունքներով:

2. ԱՌԱՔԵԼՈՒԹԻՒՆ ԵՒ ՆՊԱՏԱԿ

Յօդ. 2.1 - ՀԱՄԱԶԳԱՅԻՆը կը հաւատայ ընդհանրական եւ ազգային մշակութային արժէքներու եւ հայեցի կրթութեան կարելորդութեան եւ կը դաւանի Ազատ, Անկախ եւ Միացեալ Հայաստանի իտեպլին՝ համոզուած որ սեփական ու ինքնիշխան հայրենիքի մէջ միայն հայ մշակոյթը կրնայ հասնիլ իր ամբողջական ծաղկումին:

Յօդ. 2.2 - ՀԱՄԱԶԳԱՅԻՆի նպատակն է՝ պահպանել, զարգացնել ու տարածել հայ մշակոյթը եւ կրթութիւնը՝ Հայաստանի ու համայն հայութեան գոյատեւման առաքելութեամբ:

Յօդ. 2.3 - ՀԱՄԱԶԳԱՅԻՆը յատուկ առաքելութիւն ունի Սփիւռքի մէջ իբրեւ հայապահպանման օղակ կրթական եւ մշակութային մարզերէն ներս. ան Հայաստանի եւ Սփիւռքի մէջ զարգացող հայկական մշակութային տարբեր երանգներու մերման միջավայրն է:

3. ԳՈՐԾՈՒՆԷՈՒԹԵԱՆ ՄԻՋՈՑՆԵՐ

Յօդ. 3.1 - ՀԱՄԱԶԳԱՅԻՆը իր կրթական նպատակները կ'իրագործէ ի միջի այլոց հետեւեալ միջոցներով՝

3.1.1 - Կը հաստատէ եւ կը վարէ դպրոցներ, ճեմարաններ եւ ուսումնական այլ հիմնարկներ.

3.1.2 - Կ'օժանդակէ մասնագիտացած մարդուծի պատրաստութեան.

3.1.3 - Կը քաջալերէ մշակութային-գեղարուեստական ձիրքեր ցուցա- բերող անհատները, եւ ի հարկին նիւթապէս կ'օժանդակէ անոնց՝ յատուկ կրթաթոշակներ յատկացնելով այն ուսանողներուն, որոնք կուզեն մասնագիտանալ հայ գրականութեան եւ արուեստի, ինչպէս նաեւ ուսուցչական եւ հանրային-հրատարակային ասպարէզներու բնագաւառներուն մէջ:

Յօդ. 3.2 - ՀԱՄԱԶԳԱՅԻՆը իր մշակութային նպատակները կ'իրագործէ ի միջի այլոց հետեւեալ միջոցներով՝

3.2.1 - Կը հաստատէ եւ կը վարէ հաւաքատեղիներ, մատենադարաններ ու թանգարաններ.

3.2.2 - Կը կազմակերպէ գրքերու, թերթերու, գրական-ուսումնասիրական հանդէսներու, խտասալիկնիւրու, շարժանկարներու եւ այլ լսողա-տեսողական եւ համակարգչային նիւթերու պատրաստութիւնը, հրատարակութիւնը եւ տարածումը, ինչպէս նաեւ համացանցի վրայ գետեղումը.

3.2.3. - Կը կազմակերպէ փառատօներ, հանդիսութիւններ, թատերական, երաժշտական, պարային կամ այլ գեղարուեստական ելոյթներ, դասախօսութիւններ, ասուլիսներ, ցուցահանդէսներ, մրցանքներ, ընկերային եւ այլազան ձեռնարկներ.

3.2.4 - Կը կազմակերպէ ձայնասփիւռի եւ հեռատեսիլի յայտագիրներ.

3.2.5 - Կը քաջալերէ հեղինակներն ու արուեստագետները, ի հարկին նիւթապէս կ'օժանդակէ անոնց՝ հրատարակելով եւ տարածելով անոնց գործերը, կազմակերպելով անոնց այցելութիւնները Շրջանէ Շրջան, Հայրենիքէն Արտերկիր եւ փոխադարձաբար.

3.2.6 - Զանազան ձեռնարկներով (ցուցահանդէս, հանդիսութիւն, հրատարակութիւններ եւ այլն), հայութիւնը, հայ մշակոյթը եւ հայոց պատմութիւնը եւ Հայ Դատի մշակութային երեսը կը ծանօթացնէ հայ թէ օտար հասարակութեան.

3.2.7 - Կը գործակցի մշակութային այլ կազմակերպութիւններու հետ՝ Հայաստանի թէ Արտերկրի մէջ.

3.2.8 - Կը գործակցի եւ ի հարկին կ'անդամակցի միջազգային մշակութային կազմակերպութիւններու:

Յօդ. 3.3 - ՀԱՄԱԶԳԱՅԻՆը իր նիւթական միջոցները կրնայ ապահովել՝

3.3.1 - Անդամավճարներէ.

3.3.2 - Նուիրատուութիւններէ եւ կտակներէ.

3.3.3 - Հիմնադրամներու գոյացումէ եւ ապահով շահարկումէ.

3.3.4 - Պետական յատկացումներէ.

3.3.5 - Հանգանակութիւններէ.

3.3.6 - Հասութաբեր ձեռնարկներէ.

3.3.7 - Գրքերու թէ այլ մշակութային արտադրութիւններու վաճառքներէ:

Յօդ. 3.4 - ՀԱՄԱԶԳԱՅԻՆը կրնայ նաեւ ունենալ սեփական կալուածներ, կատարել շինութիւններ, եւ օգտագործել զանոնք իր գործունէութիւնը զարգացնելու, ինչպէս նաեւ եկամուտ ապահովելու համար:

Յօդ. 3.5 - ՀԱՄԱԶԳԱՅԻՆը կրնայ ապահովել հեղինակի իրաւունքներ՝ ըլլան անոնք ուղղակիօրէն բխած միութեան ձեռնարկներէն, թէ՛ մասնակի իրաւունքներ բխած միութեան ունեցած զանազան մասնակցութիւններէն, հրատարակչական թէ այլ ձեռնարկներու կազմակերպչական աշխատանքներու ծիրին մէջ:

4. ԱՆԴԱՄԱԿՅՈՒԹԻՒՆ

Յօդ. 4.1 - ՀԱՄԱԶԳԱՅԻՆի կրնայ անդամակցիլ 16 տարիքը ամբողջացուցած այն անհատը, որ կընդունի անոր կանոնագիրը եւ յանձնառու կը դառնայ մասնակցիլ անոր նպատակներու եւ առաջադրանքներու իրականացման աշխատանքներուն:

Յօդ. 4.2 - Անդամակցութեան դիմումնագիրը կը յղուի ամենէն մօտիկ վարչական միատրին, առ ի վաւերացում:

Յօդ. 4.3 – Համագայնական մը կրնայ մաս կազմել առաւելագոյնը մէկ Աշխարհագրական Մասնաճիւղի եւ, միաժամանակ, մի քանի Մասնագիտացած մասնաճիւղերու, սակայն իր ընտրական եւ ցենզի պարտաւորութիւնները կը կատարէ միայն մէկ)գլխաւոր(Մասնաճիւղի մէջ: Գլխաւոր Մասնաճիւղը կը ճշդէ ի՛նք՝ Շրջանային վարչութեան կամ Մեկուսի Վարչութեան վաւերացումով:

Յօդ. 4.4 - Իր բնակավայրը փոխած անդամը կրնայ փոխանցուիլ իր նոր բնակավայրի

Աշխարհագրական Մասնաճիւղին: Անդամի մը մասնաճիւղէ մասնաճիւղ կամ Շրջանէ Շրջան փոխանցումը կը կատարուի Շրջանային կամ Մեկուսի մասնաճիւղի վարչութեան կողմէ տրուած փոխանցագրով:

Յօդ. 4.5 - ՀԱՄԱԶԳԱՅԻՆԻ անդամը կը վճարէ անդամատուրք՝ որոշուած Շրջանային ժողովին կամ Մեկուսի Կազմի Ընդհանուր ժողովին կողմէ:

Յօդ. 4.6 - ՀԱՄԱԶԳԱՅԻՆԻ անդամը կը վայելէ ընտրելու եւ ընտրուելու իրաւունք:

Յօդ. 4.7 - ՀԱՄԱԶԳԱՅԻՆԸ կը սահմանէ պատուոյ անդամի կարգավիճակ, որ կը տրուի մշակոյթի, գիտութեան եւ դպրութեան մէջ կարեւոր նպաստ բերած հայ թէ ոչ-հայ անհատներու՝ Կեդրոնական Վարչութեան, ինչպէս նաեւ Պատգամաւորական ժողովներու որոշումով: Շրջանները եւ մասնաճիւղերը կրնան պատուոյ անդամութեան արժանի թեկնածուներու անուններ ներկայացնել Կեդրոնական Վարչութեան:

Յօդ. 4.8 - Պատուոյ անդամները կը հրաւիրուին խորհրդակցական ձայնով մասնակցելու ժողովներուն:

Յօդ. 4.9 - ՀԱՄԱԶԳԱՅԻՆԸ անդամ մը կրնայ հրաժարիլ իր գրաւոր դիմումով կամ մասնաճիւղի վարչութեան հաստատումով:

Յօդ. 4.10 - Օրինաւոր կերպով հրաժարած անհատ մը կրնայ դարձեալ ընդունուիլ իբրեւ անդամ, եթէ վերստին գրաւոր դիմում կատարէ:

Յօդ. 4.10 - Սոյն կանոնագրի հիմունքը խախտող անդամի մը նկատմամբ կարգապահական միջոցառումները կը ճշդուին Շրջաններու կամ Մեկուսի Կազմերու ներքին կանոնագիրներու միջոցաւ:

5. ԿԱՌՈՅՑ

Յօդ. 5.1 – ՀԱՄԱԶԳԱՅԻՆԻ կազմակերպական գլխաւոր տարրերն են՝

5.1.1 - Մասնաճիւղը

Համազգայինի կառոյցի հիմնական օղակը Մասնաճիւղն է: Մասնաճիւղը կրնայ ըլլալ Աշխարհագրական կամ Մասնագիտական:

1. Աշխարհագրական Մասնաճիւղը խմբակցութիւն մըն է, որուն անդամները կը բնակին աշխարհագրական տուեալ շրջանի մը մէջ եւ որ կը գործէ այդ շրջանին մէջ: Ան կունենայ բազմաճիւղ գործունէութիւն:

Մասնագիտական Մասնաճիղը զուտ մասնագիտական գործունեություն ունեցող խմբակցություն է եւ գործելու իրաւունք ունի իրեն վերաբերող մարզէն ներս: Ան կ'ունենայ գործունեութեան յստակօրէն բանաձեւուած նպատակ եւ միջոցներ:

Ծանօթ.- Շրջանները եւ Մեկուսի Կազմերը կը ճշդեն թէ իրենք կ'ունենան Աշխարհագրական Մասնաճիղերու դրութիւն, Մասնագիտական Մասնաճիղերու դրութիւն, թէ՛ խա՛ռն դրութիւն:

2. Մասնաճիղը կազմուած կըլլայ 7 եւ աւելի համազգայնականներէ:

Ծանօթ.- Բացառիկ պայմաններու մէջ, Մեկուսի Վարչութեան, Շրջանային Վարչութեան կամ Կեդրոնական Վարչութեան արտօնութեամբ, Մասնաճիղի անդամներուն թիւը կրնայ 7-էն պակաս ըլլալ:

3. Համազգայնականներ կը միանան այս կամ այն Մասնաճիղին՝ կամաւորութեան հիմունքով:

Մասնաճիղը կրնայ կազմուիլ համազգայնականներու դիմումին վրայ եւ Մեկուսի Վարչութեան, Շրջանային Վարչութեան կամ Կեդրոնական Վարչութեան վաւերացումով:

Մասնաճիղը կրնայ նաեւ առաջադրուիլ Մեկուսի Վարչութեան, Շրջանային Վարչութեան կամ Կեդրոնական Վարչութեան կողմէ, պայմանաւ որ միշտ յարգուի համազգայնականներու կամաւոր մասնակցութեան սկզբունքը:

Ծանօթ.1 - Կեդրոնական Վարչութիւնը կրնայ Մասնաճիղ առաջադրել կամ Մասնաճիղի մը կազմութիւնը վաւերացնել միայն աշխարհագրական առանձնացած շրջաններու մէջ (շրջաններ, ուր Շրջանային Վարչութիւն կամ Մեկուսի Վարչութիւն գոյութիւն չունին):

Ծանօթ.2 - Մասնաճիղը կ'ունենայ իր Վարչութիւնը, եթէ անդամներուն թիւը 7 կամ աւելի է: Այլապէս գործը կը կազմակերպուի եւ կը ղեկավարուի հաւաքական դրութեամբ:

4. Մասնաճիղը կը մշակէ գործունեութեան ծրագիր, որ կը ներկայացուի Շրջանային Վարչութեան, կամ Մեկուսի Վարչութեան, առ ի վաւերացում: Երբ Մասնաճիղը կապուած է Կեդրոնական Վարչութեան, գործունեութեան ծրագիրը կը վաւերացուի Կեդրոնական Վարչութեան կողմէ:

5. Մասնաճիղ մը կը լուծարուի

ա. Իր ընդհանուր ժողովի դիմումին վրայ եւ գերադաս մարմնի վաւերացումով:

բ. Գերադաս մարմնի նախաձեռնութեամբ, կանոնագրի կարելոր խախտումներու

կամ երկարատեւ անգործութեան պարագային:

6. Մասնաճիւղի մը լուծարման պարագային անոր գոյքերն ու պատրաստ գումարները կը փոխանցուին Շրջանային Վարչութեան, կամ Մեկուսի Վարչութեան:

Ծանօթ.- Երբ Մասնաճիւղը կապուած է Կեդրոնական Վարչութեան, գոյքերն ու գումարները կը փոխանցուին Կեդրոնական Վարչութեան:

7. Մասնաճիւղը կը համադրէ իր պատասխանատուութեան տակ գործող միաւորներու, գեղարուեստական խումբերու կամ յանձնախումբերու, հաստատութիւններու եւ հաւաքատեղիներու կամ մշակութային տուններու գործունէութիւնը:

Ծանօթ.- Մասնագիտական մասնաճիւղերը իրենց կապուած միաւորներ չեն ունենար:

8. Շրջանի մը մէջ գործող Մասնաճիւղերը համարատու են Շրջանային Վարչութեան: Մեկուսի Կազմի շրջանին մէջ գործող Մասնաճիւղերը համարատու են Մեկուսի Վարչութեան:

5.1.2 - Մեկուսի Կազմը

1. Մեկուսի Կազմը առանձնացած շրջան մըն է, ուր համագգայնականներու թիւը 25-ի եւ 150-ի միջեւ է:

2. Մեկուսի Կազմը կ'ունենայ իր Մեկուսի Վարչութիւնը, որ կընտրուի շրջանի բոլոր Մասնաճիւղերու ընդհանուր ժողովին կողմէ:

3. Մեկուսի Վարչութիւնը կը կազմակերպէ շրջանային բնոյթի իր գործունէութիւնը:

4. Մեկուսի Վարչութիւնը կը համադրէ իր պատասխանատուութեան տակ գործող Մասնաճիւղերու, գեղարուեստական կամ այլ Միաւորներու կամ յանձնախումբերու, հաստատութիւններու եւ հաւաքատեղիներու կամ մշակութային տուններու գործունէութիւնը:

5. Մեկուսի Վարչութիւնները համարատու են Կեդրոնական Վարչութեան:

5.1.3 - Շրջանը

1. Շրջանը մէկէ աւելի Մասնաճիւղերու խմբաւորումն է՝ տուեալ աշխարհագրական շրջանի մը մէջ: Շրջանին մէջ համագգայնականներու թիւը առնուազն 151 է:

2. Կ'ունենայ իր Շրջանային Վարչութիւնը՝ ընտրուած Շրջանային Ժողովին կողմէ:

3. Շրջանային Վարչութիւնը կը կազմակերպէ շրջանային բնոյթի իր գործունէութիւնը.

4. Շրջանային Վարչութիւնը կը համադրէ իր պատասխանատուութեան տակ գործող, Մասնաճիւղերու, գեղարուեստական կամ այլ Միաւորներու կամ յանձնախումբերու, հաստատութիւններու եւ հաւաքատեղիներու կամ մշակութային տուններու գործունէութիւնը:

5. Շրջանային Վարչութիւնները համարատու են Կեդրոնական Վարչութեան:

5.1.4 - Կեդրոնական Վարչութիւնը

1. Կեդրոնական Վարչութիւնը Պատգամաւորական Ժողովին կողմէ ընտրուած գերագոյն մարմինն է.

2. Կը վարէ, կը համադրէ ու կը ներդաշնակէ ՀԱՄԱԶԳԱՅԻՆԻ ընդհանուր համաշխարհային գործունէութիւնը:

Յօդ. 5.2 - ՀԱՄԱԶԳԱՅԻՆԻ կազմակերպական այլ տարրերն են՝

5.2.1 - Գեղարուեստական կամ այլ բնոյթի խումբերը կամ յանձնախումբերը, հաստատութիւնները, գրասենեակները, հաւաքատեղիները եւ մշակոյթի տունները:

1. Անոնք կը գործեն Մասնաճիւղի մը, Մեկուսի Կազմի մը, Շրջանի մը կամ Կեդրոնական Վարչութեան պատասխանատուութեան տակ.

2. Կրնան ունենալ իրենց ներքին կանոնագիրը՝ ներդաշնակ սոյն ընդհանուր կանոնագրին հետ:

5.2.2 - Միաւորները

1. Միաւորները գեղարուեստական կամ այլ բնոյթի խումբեր են.

2. Կը գործեն իրենց մասնագիտութեան մարզին մէջ.

3. Կունենան իրենց վարչութիւնը ու ներքին կանոնագիրը՝ ներդաշնակ սոյն ընդհանուր կանոնագրին հետ:

4. Միաւորներու Վարչութիւնները համարատու են այն մարմնին, որուն կողմէ հաստատուած են (Աշխարհագրական Մասնաճիւղի մը Վարչութեան կամ Մեկուսի Վարչութեան կամ Շրջանային Վարչութեան):

Յօդ. 5.3 - ՀԱՄԱԶԳԱՅԻՆը ունի հետևեալ ժողովներն ու վարչութիւնները.

5.3.1 - Մասնաճիւղի կամ Մեկուսի Կազմի Ընդհանուր ժողով

1. Ան Մասնաճիւղի կամ Մեկուսի Կազմի գերագոյն ժողովն է.
2. Կը գումարուի տարին նուազագոյնը մէկ անգամ.
3. Կը քննարկէ շրջանաւարտ վարչութեան գործունէութիւնը.
4. Կընտրէ նոր վարչութիւն:

5. Մասնաճիւղի կամ Մեկուսի Կազմի տարեկան կամ այլ ժողովներու բնոյթն ու գումարման պայմանները կը ճշդուին Շրջաններու կամ Մեկուսի Կազմերու ներքին կանոնագրով:

5.3.2 - Շրջանային ժողով

1. Ան Շրջանի գերագոյն ժողովն է.
2. Կը գումարուի մէկ կամ երկու տարին անգամ մը.
3. Կը քննարկէ շրջանաւարտ վարչութեան գործունէութիւնը.
4. Կընտրէ նոր վարչութիւն:

5. Շրջանային ու Արտակարգ շրջանային ժողովներու բնոյթն ու գումարման պայմանները կը ճշդուին Շրջաններու ներքին կանոնագրով:

5.3.3 - Պատգամաւորական ժողով

1. Ան ՀԱՄԱԶԳԱՅԻՆի գերագոյն ժողովն է.
- 2 Կը գումարուի չորս տարին անգամ մը.
3. Կը քննարկէ շրջանաւարտ Կեդրոնական Վարչութեան գործունէութիւնը.
4. Կընտրէ նոր Կեդրոնական Վարչութիւն:

5. Պատգամաւորական ու Արտակարգ պատգամաւորական ժողովներու բնոյթն ու գումարման պայմանները ճշդուած են սոյն Ընդհանուր կանոնագրով:

Յօդ. 5.4 - Վարչութիւններուն միջեւ փոխադարձ հասկացողութեամբ կը պահուին յարաբերութիւնները՝ վերադաս վարչութեան գիտութեամբ:

Յօդ. 5.5 - Լուծարում

5.5.1 - Մասնաճիւղի մը կամ Միաւորի մը լուծարման պարագային անոր կալուածներու, գոյքերու եւ արխիւներու տնօրինումը կը կատարուի Շրջանային Վարչութեան կամ Մեկուսի Վարչութեան հայեցողութեամբ:

5.5.2 - Շրջանի մը կամ Մեկուսի Կազմի մը լուծարման պարագային անոր կալուածներու, գոյքերու եւ արխիւներու տնօրինումը կը կատարուի Կեդրոնական Վարչութեան հայեցողութեամբ:

6. ՆԵՐՔԻՆ ԿԱՆՈՆԱԳԻՐՆԵՐ

Յօդ. 6.1 - Մեկուսի Կազմերու, Միաւորներու եւ Շրջաններու ներքին կանոնագիրները կը մշակուին Շրջանային ժողովներուն կամ Մեկուսի Կազմերու Ընդհանուր ժողովներուն կողմէ:

Յօդ. 6.2 - Ներքին կանոնագիրները կը պարունակեն Ընդհանուր Կանոնագրի բոլոր յօդուածները, այլեւ Մասնաճիւղերու, Մեկուսի Կազմերու, Միաւորներու եւ Շրջաններու վերաբերեալ բաժիններ, եւ կրնան պարունակել յաւելեալ յօդուածներ ընդհանուր կանոններու, ժողովավարական կանոններու եւ այլ բաժիններու մէջ:

Յօդ. 6.3 - Ներքին կանոնագիրները կը վաւերացուին Կեդրոնական Վարչութեան կողմէ:

ԳԱՆԱՏԱՅԻ ՇՐՋԱՆԻՆ ՎԵՐԱԲԵՐԵԱԼ

Յօդ. 6.4 - Գանատայի Շրջանին կը վերաբերին այս բաժնին յաջորդ յօդուածներն ու թիւ 7-էն թիւ 12 բաժինները:

Յօդ. 6.5 - Գանատայի Շրջանին ներքին կանոնագրին մէջ փոփոխութիւններ կրնան կատարուիլ, այնքան ատեն որ չեն հակասեր Ընդհանուր Կանոնագրի տրամադրութիւններուն. այդ փոփոխութիւնները կրնան արդիւնք ըլլալ Շրջանի օրինական եւ ընկերային իւրայատուկ ըմբռումներուն կամ պայմաններուն:

Յօդ. 6.6 - Փոփոխութեան առաջարկները Մասնաճիւղի մը վարչութեան կամ անդամներուն կողմէ կը ներկայացուին Մասնաճիւղի տարեկան ընդհանուր ժողովին կամ արտակարգ ընդհանուր ժողովի մը:

Յօդ. 6.7 - Փոփոխության առաջարկները ընդհանուր ժողովին կողմէ կը վաւերացուին ներկայ ձայներու երկու երրորդի մեծամասնութեամբ: Իսկ փոքրամասնութեան տեսակէտը նոյնպէս կը փոխանցուի Շրջանային վարչութեան:

Յօդ. 6.8 - Փոփոխության առաջարկները Շրջանային ժողովէն առ-նուագն երեք ամիս առաջ կ'ուղարկուին Շրջանային վարչութեան:

Յօդ. 6.9 - Փոփոխության առաջարկները Շրջանային վարչութեան կողմէ կը տեղեկացուին Մասնաճիւղերու վարչութիւններուն՝ համապատասխան ժողովներէն քննուելու համար, Շրջանային ժողովի գումարումէն առնուագն երեսուն օր առաջ:

Յօդ. 6.10 - Շրջանային ժողովը կը վաւերացնէ այդ առաջարկները, ներկայ ձայներու երկու երրորդի մեծամասնութեամբ:

Յօդ. 6.11 - Շրջանային ժողովին կողմէ վաւերացուած փոփոխության որոշումները, Կեդրոնական վարչութեան հաւանութիւնը ունենալէ ետք, ի զօրու կը դառնան բոլոր մասնաճիւղերուն համար:

7. ՄԱՍՆԱՃԻՒԴ

Յօդ. 7.1 - Գանատայի Շրջանը կը գործէ Աշխարհագրական Մասնաճիւղերու դրութեամբ:

Յօդ. 7.2 - Նուագագոյն 7 անդամներ հաշուող խմբաւորում մը կրնայ մասնաճիւղ դառնալ:

Յօդ. 7.3 - Մասնաճիւղի կազմութեան նախաձեռնող կրնայ ըլլալ Շրջանային վարչութիւնը: Այս նախաձեռնութիւնը կրնայ գալ նաեւ Շրջանի մը մէջ հայ մշակոյթով հետաքրքրուող անհատներէ, որոնք կ'իրացնեն Համագգայինի Կանոնագրի տրամադրութիւնները եւ մասնաճիւղ մը կազմելու համար հաւաքական դիմում կը կատարեն Շրջանային վարչութեան:

Յօդ. 7.4 - Մասնաճիւղի մը կազմութիւնը վաւերական կը դառնայ Շրջանային վարչութեան հաստատումով:

Յօդ. 7.5 - Մասնաճիւղը կրնայ ունենալ իր նահանգի պաշտօնական ճանաչումը (Charter):

Յօդ. 7.6 - Նկատի ունենալով նահանգի օրինական պահանջները մասնաճիւղը կ'ունենայ իր ներքին Ծրագիր-Կանոնագիրը՝ պատշաճեցուած սոյն Կանոնագրին եւ վաւերացուած Շրջանային վարչութեան կողմէ:

Յօդ. 7.7 - Մասնաճիւղ մը երբ Կանոնագրով որոշուած իր օրինական նուագագոյն թիւը (7) կը կորսնցնէ, կը շարունակէ իր գործունէութիւնը միայն Շրջանային վարչութեան

արսօնութեամբ, այլապէս կը լուծարուի անոր կողմէ:

Յօդ. 7.8 - Ի հարկին, որեւէ մասնաճիւղի տարեկան կամ բացառիկ անդամական ընդհանուր ժողովը կրնայ լուծարուած յայտարարել մասնաճիւղը՝ մասնաճիւղի անդամներու ընդհանուր թիւի երկու երրորդէն աւելիի որոշումով եւ Շրջանային վարչութեան հաւանութեամբ:

8. ՄԱՍՆԱՃԻԻՂԱՅԻՆ ԺՈՂՈՎՆԵՐ

Յօդ. 8.1 - Ընդհանուր ժողովը մասնաճիւղի մը գերագոյն ժողովն է:

Յօդ. 8.2 - Ընդհանուր ժողով կը գումարուի առնուազն տարին անգամ մը:

Յօդ. 8.3 - Հաշուական տարեփակին գումարուող ընդհանուր ժողովը կը կոչուի տարեկան ընդհանուր ժողով, եւ տեղի կունենայ, մասնաճիւղի վարչութեան գրաւոր հրաւերով, ուր նշուած կ'ըլլայ ժողովին օրակարգը:

Յօդ. 8.4 – Շրջանային ժողով գումարուած տարին, տարեկան ընդհանուր ժողովը կունենայ նուազագոյնը երկու նիստեր, որոնց առաջինը կը գումարուի Շրջանային ժողովին նախորդող երեսուն օրերուն ընթացքին, այլապէս ստորեւ նշուած օրակարգի բոլոր կէտերը կրնան լուծուիլ միեւնոյն նիստին:

Յօդ. 8.5 - Տարեկան ընդհանուր ժողովի առաջին նիստը կը տանի հետեւեալ աշխատանքները.

8.5.1 - Կընտրէ իր դիւանը, բանաձեւի եւ քուէախոյզ յանձնախումբերը, որոնց իրաւասութիւնները կ'աւարտին ժողովի փակումին.

8.5.2 - Կը քննէ շրջանաւարտ վարչութեան գործունէութիւնը, նիւթական հաշուեկշիռը եւ հաշուեքննիչ ու արխիւային յանձնախումբերու զեկուցագրերը.

8.5.3 - Կը քննէ եւ կը լուծէ մասնաճիւղի առկախ հարցերը.

8.5.4 - Ի հարկին կը վերամշակէ ներքին կանոնագիրը, համաձայն սոյն Կանոնագրի տրամադրութիւններուն.

8.5.6 - Կը բանաձեւէ ընդհանուր գործունէութեան վերաբերեալ իր տեսակէտները, թելադրանքներն ու որոշումները՝ Շրջանային ժողովին փոխանցելու համար.

8.5.7 - Կընտրէ մասնաճիւղի ներկայացուցիչները՝ Շրջանային ժողովին մասնակցելու համար, ըստ սոյն կանոնագրի տրամադրութիւններուն:

Յօդ. 8.6 - Տարեկան ընդհանուր ժողովի երկրորդ նիստը կը գումարուի Շրջանային ժողովին յաջորդող երկու շաբաթներուն ընթացքին, դիւանի գրաւոր հրաւերով, եւ կը տանի հետեւեալ աշխատանքները.

8.6.1 - Կունկնդրէ Շրջանային կամ Պատգամաւորական ժողովներէն վերադարձող ներկայացուցիչներու զեկոյցը.

8.6.2 - Կը կատարէ առաջարկներ եւ թելադրութիւններ յառաջիկայ տարուան գործունէութեան համար.

8.6.3 - Կընտրէ հաշուեքննիչ եւ արխիւային թուղթերու քննիչ յանձնախումբեր յառաջիկայ տարեշրջանին համար.

Ծանօթ.- Ընդհանուր Ժողովը, եթէ անհրաժեշտ նկատէ, կրնայ ընտրել նախորդ Ընդհանուր ժողովի ընտրած հաշուեքննիչ եւ արխիւային թուղթերու քննիչ յանձնախումբերը փոխարինող նոր յանձնախումբեր:

8.6.4 - Կընտրէ ընտրական ցանկի յանձնախումբ որ կը զբաղի մէկ տարի ետք գալիք վարչութեան թեկնածուներու ցանկի պատրաստութեամբ: Սոյն յանձնախումբը պարտի ընտրութենէն բաւարար ժամանակ առաջ սկսիլ թեկնածուներու փնտռտուքին եւ ստանալ թեկնածութեան առաջարկները՝ ընդհանուր ժողովին ներկայացնելու համար:

Ծանօթ.- Ընդհանուր Ժողովը, եթէ անհրաժեշտ նկատէ, կրնայ ընտրել նախորդ Ընդհանուր ժողովի ընտրած ընտրական ցանկի յանձնախումբը փոխարինող նոր յանձնախումբ մը:

8.6.5 - Կը ճշդէ տարեկան անդամավճարի սակը.

8.6.6 - Կընտրէ նոր վարչութիւն:

Յօդ. 8.7 - Մասնաճիւղի արտակարգ ընդհանուր ժողով կը գումարուի՝

8.7.1 - Վարչութեան հրաւերով.

8.7.2 - Անդամներու մեծամասնութեան պահանջով.

8.7.3 - Արտակարգ պայմաններու մէջ, Շրջանային վարչութեան հրաւերով:

Ծանօթ.- Վարչութիւնը պարտաւոր է ընդհանուր ժողովի թուականն ու վայրը տեղեկացնել բոլոր անդամներուն եւ Շրջանային վարչութեան, ընդհանուր ժողովի թուականէն նուազագոյնը երկու շաբաթ առաջ:

Յօդ. 8.8 - Մասնաճիւղի ընդհանուր ժողովը օրինաւոր կը նկատուի երբ ժողովին ներկայ կըլլայ մասնաճիւղի անդամներու պարզ մեծամասնութիւնը, ընդհանուր թիւէն հանելէ ետք

բանաւոր բացակայութիւնը: Մակայն, ընդհանուր ժողովի գումարման որոշուած ժամանակէն կէս ժամ ետք եթէ պահանջուած մեծամասնութիւնը չէ գոյացած, ժողովը օրինաւոր կը նկատուի: Սոյն տրամադրութիւնը պէտք է յիշուի ժողովի հրաւերին մէջ:

Յօդ. 8.9 - Ընդհանուր ժողովի այն օրակարգի նիւթերուն որոնց համար վարչութիւնը համարատու է, վարչութիւնը կը մասնակցի մէկ իրաւասու ձայնով (որոշուած՝ վարչութեան կողմէ), իսկ մնացեալ անդամները՝ խորհրդակցական ձայնով:

Յօդ. 8.10 - Ընդհանուր ժողովի որոշումները կը տրուին եւ ընտրութիւնները կը կատարուին ձայներու պարզ մեծամասնութեամբ, բացի Կանոնագրով ճշդուած յատուկ պարագաներէ:

Յօդ. 8.11 - Մասնաճիւղի ընդհանուր ժողովին իրաւասու ձայնով կը մասնակցին բոլոր անդամները եւ Շրջանային վարչութեան ներկայացուցիչը, իսկ խորհրդակցական ձայնով՝ Շրջանային վարչութեան մնացեալ անդամները:

Յօդ. 8.12 - Ընդհանուր ժողովներուն չեն կրնար քուէարկել, ընտրել կամ ընտրուիլ այն բոլոր անդամները որ չեն կատարած իրենց նիւթական պարտա-ւորութիւնները:

Յօդ. 8.13 - Մասնաճիւղ մը կը գումարէ նաեւ տարին առնուազն չորս անդամական հերթական ժողովներ, զեկուցական կամ այլ անմիջական գործերու եւ հարցերու համար:

Յօդ. 8.14 - Մասնաճիւղի վարչութեան դիւանը կը վարէ սոյն հերթական ժողովները:

9. ՄԱՍՆԱՃԻՒԴԱՅԻՆ ՎԱՐՉՈՒԹԻՒՆ

Յօդ. 9.1 - Վարչութիւնը կ'ընտրուի մասնաճիւղի ընդհանուր ժողովին կողմէ, մէկ տարուան համար, գաղտնի քուէարկութեամբ եւ ձայներու պարզ մեծամասնութեամբ:

Յօդ. 9.2 - Նորընտիր վարչութիւն մը, դիւանի կազմութենէն ետք, գրաւոր կերպով կը վաւերացուի Շրջանային վարչութեան կողմէ:

Յօդ. 9.3 - Նորընտիր վարչութիւնը ընդհանուր ժողովէն մինչեւ երկու շաբաթ կ'ընտրէ իր դիւանը եւ գրաւոր կերպով կը տեղեկացնէ Շրջանային վարչութեան:

Յօդ. 9.4 - Վարչութիւն մը իր տարեշրջանին ընթացքին եթէ փոխէ իր դիւանը, նոյնպէս պարտի մինչեւ երկու շաբաթ տեղեկացնել Շրջանային վարչութեան՝ առ ի տեղեկութիւն:

Յօդ. 9.5 - Վարչութիւնը կը բաղկանայ 3, 5, 7, 9 կամ 11 անդամներէ, ճշդուած՝ ընդհանուր ժողովին կողմէ: Անդամներէն ռեւէ մէկուն կամ երկուքին դադրեցման, հրաժարումին կամ երկարատեւ բացակայութեան պարագային, վարչութիւնը իր կազմը կամբողջացնէ, ըստ իր հայեցողութեան եւ Շրջանային վարչութեան հաւանութեամբ: Կէսէն աւելիի հրաժարումի եւ

բացակայութեան պարագային՝ վարչութիւնը կը հրաւիրէ արտակարգ Ընդհանուր ժողով:

Յօդ. 9.6 - Վարչական ժողովներու վայրն ու հերթականութիւնը կորոշուին վարչութեան կողմէ:

Յօդ. 9.7 - Վարչութեան դիւանը կը վարէ ժողովները, կ'արձանագրէ տրուած որոշումները, կը կատարէ թղթակցութիւնները եւ կը հսկէ ժողովներու որոշումներու գործադրութեան:

Յօդ. 9.8 - Վարչութիւնը կը նշանակէ զանազան յանձնախումբեր, ըստ կարիքի (երգչախումբ, պարախումբ, թատերախումբ, գրական, գեղարուեստական, գրատարած եւայլն), իր աշխատանքները համակարգելու եւ անդամները գործի լծելու նպատակով:

Յօդ. 9.10 - Վարչութիւնը իւրաքանչիւր յանձնախումբի մօտ կը նշանակէ իր ներկայացուցիչը, որ կրնայ անպայման իր կազմէն չըլլալ:

Յօդ. 9.11 - Նորընտիր վարչութիւնը կը պատրաստէ գործունէութեան նախագիծ եւ նախահաշիւ որոնք կը ներկայացուին անդամական ժողովին:

Յօդ. 9.12 - Վարչութիւնները Շրջանային վարչութեան կանոնաւոր կերպով կը փոխանցեն իրենց նիստերու եւ ընդհանուր ժողովներու ատենագրութիւնները, տարեկան գործունէութեան տեղեկագիրի ինչպէս նաեւ տարեկան ծրագրի պատճէնները՝ առ ի տեղեկութիւն:

Յօդ. 9.13 - Վարչութիւններու միջեւ կապերը կը պահուին Շրջանային վարչութեան գիտութեամբ, իսկ շրջանէն դուրս կապերը՝ Շրջանային վարչութեան եւ Կեդրոնական վարչութեան գիտութեամբ:

Յօդ. 9.14 - Վարչութիւնը պարտաւոր է Շրջանային վարչութեան ուղարկել իր տարեկան ցենզը, ճշդուած՝ Շրջանային ժողովին կողմէ:

Յօդ. 9.15 - Վարչութիւնները պատասխանատու են մասնաճիւղի ընդհանուր ժողովներու, Շրջանային ժողովներու եւ Շրջանային վարչութեան որոշումներու գործադրութեան:

Յօդ. 9.16 - Վարչութիւնները Շրջանային վարչութեան տնօրինումներուն դէմ պատճառաբանեալ առարկութիւններ ընելու իրաւունք ունին: Շրջանային վարչութեան երկրորդ պահանջին պարագային՝ որոշումին գործադրութիւնը կը դառնայ պարտաւորիչ:

Յօդ. 9.17 - Վարչութիւն մը, այլ մասնաճիւղի մը սահմաններէն ներս գործունէութիւն ունենալու համար, նախապէս պէտք է ստանայ Շրջանային վարչութեան արտօնութիւնը եւ տուեալ վարչութեան հաւանութիւնը:

Յօդ. 9.18 - Վարչութիւն մը կրնայ գործակցիլ հայ եւ օտար մշակութային միութիւններու

հետ, ստանալէ ետք Շրջանային վարչութեան հաւանութիւնը:

Յօդ. 9.19 - Շրջանային վարչութիւնը իրաւասու է լուծարելու այն վարչութիւնները, որոնք, առանց բանաւոր պատճառի, կը թերանան կանոնագիրով նախատեսուած իրենց պարտաւորութիւններուն մէջ:

Յօդ. 9.20 - Վարչութեան մը լուծարման պարագային, Շրջանային վարչութիւնը կը նշանակէ առժամեայ վարչութիւն մը, որ իր աշխատանքը կը տանի մինչեւ մասնաճիւղի ընդհանուր ժողովը, որ պէտք է գումարուի առաւելագոյնը 6 ամիսէն:

10. ՄԻԱԻՈՐՆԵՐ

Յօդ. 10.1 - Միաւորներ

10.1.1 - Միաւորները գուտ մասնագիտական գործունէութիւն ունեցող խմբակցութիւններ են, որոնք գործելու իրաւունք ունին իրենց վերաբերող մարզէն ներս:

10.1.2 - Գեղարուեստական իւրաքանչիւր խումբ (թատրոն, պարարուեստ, երաժշտութիւն, կերպարուեստ ելն.) իբր միաւոր կրնայ գործել:

10.1.3 - Միաւորները կրնան կազմուիլ Շրջանային վարչութեան կողմէ միայն:

10.1.4 - Միաւորները կրնան բաղկանալ Համագգայինի անդամներէ եւ ոչ անդամներէ:

10.1.5 - Միաւորները կ'ունենան իրենց ներքին կանոնագիրը, վաւերացուած՝ Շրջանային վարչութեան կողմէ:

11. ՇՐՋԱՆԱՅԻՆ ԺՈՂՈՎ

Յօդ. 11.1 - Շրջանային ժողովը Շրջանի մը գերագոյն ժողովն է: Ան կը գումարուի տարին անգամ մը, Շրջանային վարչութեան հրաւերով:

Յօդ. 11.2 - Արտակարգ շրջանային ժողով կը գումարուի՝

11.2.1 - Վարչութիւններու կէսէն աւելին առանձնաբար ներկայացուցած պահանջով.

11.2.2 - Շրջանային վարչութեան որոշումով՝ բացառիկ հարցի մը քննարկման եւ տնօրինման համար.

11.2.3 - Համազգայինի Կեդրոնական վարչութեան պահանջով:

Յօդ. 11.3 - Շրջանային ժողովին իրաւասու ձայնով կը մասնակցին՝

11.3.1 - Մասնաճիւղերու ներկայացուցիչները.

11.3.2 - Մասնաճիւղերու վարչութիւններէն մէկական ներկայացուցիչ.

11.3.3 - Շրջանային վարչութեան ներկայացուցիչը.

11.3.4 - Կեդրոնական վարչութեան ներկայացուցիչը.

11.3.5 - ՀՅԴ շրջանի մարմնի ներկայացուցիչը:

Յօդ. 11.4 - Մասնաճիւղի ընդհանուր ժողովը իր անդամներու իրաքանչիւր 25-ին համար կ'ընտրէ մէկ ներկայացուցիչ: Վերջին 15 եւ աւելի անդամներուն համար ժողովը կ'ընտրէ յաւելեալ մէկ ներկայացուցիչ:

Յօդ. 11.5 - Շրջանային ժողովին խորհրդակցական ձայնով եւ ի պաշտօնէ կը մասնակցին՝

11.5.1 - Շրջանային վարչութեան անդամները.

11.5.2 - Շրջանային յանձնախումբերու, հաշուեքննիչ ու արխիւներու քննիչ յանձնախումբերու անդամները, միաւորներու եւ հաստատութիւններու ներկայացուցիչները.

11.5.3 - Կեդրոնական վարչութեան անդամները:

11.5.4 - Համազգայինի այլ Շրջանային վարչութեանց ներկայացուցիչները:

Յօդ. 11.6 - Շրջանային ժողովին խորհրդակցական ձայնով կը հրաւիրուին իրաւասու ձայնով մասնակցողներու թիւին մէկ երրորդին համեմատութեամբ անդամներ, որոնք նուազագոյնը մէկ տարիէ ի վեր կ'անդամակցին միութեան: Շրջանային վարչութիւնը իրաւասութիւն ունի հրաւիրեալներուն կէսը նշանակելու, իսկ մնացեալ կէսը՝ կ'ընտրէ Շրջանային ժողովը: Այս թիւին մաս չեն կազմեր վերոնշեալ ի պաշտօնէ հրաւիրեալները:

Յօդ. 11.7 - Համազգայինի բոլոր անդամները կրնան Շրջանային ժողովին մասնակցիլ իբր ունկնդիր, յարգելով ժողովին կարգն ու կանոնը, եւ կանխաւ տեղեակ պահելով Շրջանային վարչութիւնը:

Յօդ. 11.8 - Շրջանային ժողովը օրինաւոր կը նկատուի՝

11.8.1 - Երբ ներկայացուցիչներու թիւին կէսէն աւելին ներկայ է.

11.8.2 - Երբ մասնաճիւղերու թիւին կէսէն աւելին ներկայ է:

Յօդ. 11.9 - Շրջանային ժողովին Շրջանային վարչութեան անդամներու մասնակցութեան ծախսերը կը հոգացուին Շրջանային վարչութեան կողմէ: Մասնաճիւղերը կը հոգան իրենց ներկայացուցիչներուն ծախսերը:

Յօդ. 11.10 - Շրջանային վարչութեան անդամը չի կրնար ներկայացուցիչ ընտրուիլ մասնաճիւղի մը կողմէ:

Յօդ. 11.11 - Շրջանային ժողովը կը տանի հետեւեալ աշխատանքները.

11.11.1 - Կընտրէ իր դիւանը եւ բանաձեւի եւ քուէախոյզ յանձնախումբերը, որոնց իրաւասութիւնները կ'աւարտին ժողովի փակումին, ինդպէս նաեւ՝ հաշուեքննիչ, արխիւային թուղթերու քննիչ յանձնախումբերը, որոնք յառաջիկայ տարուան Շրջանային ժողովին կը ներկայացնեն նորընտիր Շրջանային վարչութեան հաշիւներուն ու արխիւներուն վերաբերեալ իրենց տեղեկագիրները:

Ծանօթ.- Շրջանային ժողովը, եթէ անհրաժեշտ նկատէ, կրնայ ընտրել նախորդ Շրջանային ժողովի ընտրած հաշուեքննիչ եւ արխիւային թուղթերու քննիչ յանձնախումբերը փոխարինող նոր յանձնախումբեր:

11.11.2 - Կը քննէ շրջանաւարտ վարչութեան միամեայ գործունէութեան տեղեկագիրը եւ կը հանէ համապատասխան բանաձեւ:

11.11.3 - Գալիք միամեայ շրջանին համար կը ճշդէ նորընտիր Շրջանային վարչութեան գործունէութեան ուղեգիծը, կը կազմէ շրջանային վարչութեան նախահաշիւը եւ կը կատարէ մասնաճիւղերու վրայ ցենզի բաշխումը:

11.11.4 - Կը քննէ Շրջանային ժողովի օրակարգը եւ կը հանէ համապատասխան բանաձեւեր.

11.11.5 - Ի հարկին կը վերամշակէ Շրջանի ներքին կանոնագիրը՝ համաձայն Ընդհանուր Կանոնագրի տրամադրութիւններուն)տես ստորեւ Կանոնագրային փոփոխութիւններ բաժինը(։ Վերամշակուած Կանոնագիրը կ'ուղարկուի Կեդրոնական Վարչութեան առ ի վաւերացում:

11.11.6 - Կընտրէ նոր Շրջանային վարչութիւն: Շրջանային վարչութեան անդամները կ'ընտրուին երկու տարուան համար, գաղտնի քուէարկութեամբ եւ ձայներու պարզ մեծամասնութեամբ: Իւրաքանչիւր տարուան Շրջանային ժողովին, կազմին կէսն է, որ փոփոխելի կըլլայ. այսպէս, օրինակ, 5 հոգինոց մարմնի մը պարագային, տարի մը տեղի կ'ունենայ 3 անդամի ընտրութիւն, յաջորդ տարի՝ 2 անդամի, նոյն ձեւով՝ յաջորդաբար 4 ու 3

անդամներու ընտրութիւն՝ 7 հոգինոց մարմնի պարագային:

Ծանօթ.- Այն պարագային, երբ Շրջանային Վարչութեան անդամներու թիւի նախապէս տեղի ունեցած փոփոխութեան պատճառաւ կարելի չըլլար այս տրամադրութիւնը յարգել, Շրջանային Ժողովը ի՛նք կը ճշդէ թէ քանի՛ հոգի պիտի ընտրուի:

11.11.7 - Կընտրէ պատգամաւորներ Համագայինի Պատգամաւորական ժողովին, ըստ կանոնագրի տրամադրութեան:

Յօդ. 11.12 - Շրջանային ժողովը կը քննէ մասնակցութեան ձեւը (իրաւասու կամ խորհրդակցական) այն մասնաճիւղերուն, որոնք իրենց նիւթական պարտաւորութիւնները չեն կատարած:

Յօդ. 11.13 - Շրջանային ժողովի որոշումները եւ Շրջանային վարչութեան ընտրութեան արդիւնքը կը յղուին Կեդրոնական վարչութեան, առ ի վաւերացում:

12. ՇՐՋԱՆԱՅԻՆ ՎԱՐՉՈՒԹԻՒՆ

Յօդ. 12.1 - Շրջանային վարչութիւնը կը վարէ շրջանի միութենական գործերը, կանոնագիրի տրամադրութեանց, Շրջանային ժողովի եւ Պատգամաւորական ժողովի որոշումներու սահմանին մէջ:

Յօդ. 12.2 - Շրջանային վարչութիւնը կը բաղկանայ 5, 7, 9 կամ 11 անդամներէ:

Յօդ. 12.3 - Հրաժարող Շրջանային վարչութիւնը, ընտրական Շրջանային ժողովի թուականէն նուազագոյնը երկու ամիս առաջ, կը նշանակէ ընտրական յանձնախումբ, որ կը պատրաստէ յաջորդ վարչութեան հաւանական թեկնածուներու ցանկը:

Յօդ. 12.4 - Շրջանային վարչութեան անդամ մը չի կրնար միաժամանակ մասնաճիւղի մը վարչութեան անդամ ընտրուիլ:

Յօդ. 12.5 - Մասնաճիւղերը, շրջանային յանձնախումբերը եւ գեղարուեստական միատրները ուղղակիօրէն ենթակայ են Շրջանային վարչութեան, որուն պարտականութիւնն է համադրել եւ ներդաշնակել անոնց գործունէութիւնը:

Յօդ. 12.6 - Շրջանային վարչութիւնը մօտէն կը հետեւի շրջանային եւ մնայուն բնոյթ ունեցող կրթական եւ այլ հաստատութիւններու գործունէութեան եւ անոնց ղեկավարումը կը վստահի պատասխանատու մարմիններու, որոնք կ'առաջնորդուին հաստատութեան ներքին կանոնագիրով:

Յօդ. 12.7 - Շրջանային վարչութիւնը կ'ունենայ երեք հոգինոց դիւան մը, բաղկացած՝ ատենապետէ, ատենադպիրէ եւ գանձապահէ:

Յօդ. 12.8 - Շրջանային վարչութեան ներկայացուցիչը կրնայ մասնակցիլ մասնաճիւղերու, միաւորներու վարչութիւններուն եւ շրջանային յանձնախումբերու ժողովներուն՝ խորհրդակցական ձայնով:

Յօդ. 12.9 - Շրջանային վարչութիւնը կը գումարէ տարին նուազագոյնը չորս լիազումար ժողովներ: Անդամներու պարզ մեծամասնութեան ներկայութիւնը բաւարար է այս ժողովները օրինաւոր համարելու համար: Որոշումները կը տրուին ներկաներու պարզ մեծամասնութեամբ:

Յօդ. 12.10 - Շրջանային վարչութիւնը Շրջանային ժողովէն առնուազն երկու ամիս առաջ, մասնաճիւղերուն կը յղէ Շրջանային ժողովի օրակարգը:

Ծանօթ.- Մասնաճիւղերը եթէ օրակարգի հարցեր ունին պէտք է Շրջանային ժողովէն երեք ամիս առաջ զանոնք յղեն Շրջանային վարչութեան:

Յօդ. 12.11 - Շրջանային վարչութիւնը Կեդրոնական վարչութեան կը փոխանցէ Շրջանային ժողովի ատենագրութեան պատճէնը, ինչպէս նաեւ իր նիստերու ատենագրութեանց, տարեկան ծրագիրի, գործունէութեան տեղեկագիրի եւ հաշուեկշիռի պատճէնները:

Յօդ. 12.12 - Որեւէ պատճառով Շրջանային վարչութենէն դադրող անդամ մը փոխարինելու համար, Շրջանային վարչութիւնը իր կազմը կ'ամբողջացնէ ըստ իր հայեցողութեան եւ Կեդրոնական վարչութեան հաւանութեամբ:

Յօդ. 12.13 - Շրջանային վարչութիւնը պարտաւոր է Կեդրոնական վարչութեան փոխանցել Պատգամաւորական ժողովի կողմէ որոշուած ցենզը՝ ամէն տարի կանոնաւորաբար:

Յօդ. 12.14 - Շրջանային վարչութիւնը իրաւասու է յատուկ լիազօր ներկայացուցիչներ ուղարկելու իր մասնաճիւղերու եւ միաւորներու վարչութեանց բարոյական եւ նիւթական գործունէութիւնը քննելու, ներքին խնդիրները կարգադրելու եւ անոնց ուղղութիւն տալու համար:

Յօդ. 12.15 - Շրջանային վարչութիւնը, բացառիկ պարագաներու, իրաւասու է լուծարելու մասնաճիւղի մը վարչութիւնը եւ առաջացնելու նշանակովի վարչութիւն, որ կը գործէ առաւելագոյնը՝ վեց ամիս:

Յօդ. 12.16 - Միայն Շրջանային վարչութիւնը կրնայ միջ-մասնաճիւղային հանդիպումներ եւ համագումարներ կազմակերպել:

Յօդ. 12.17 - Միջ-շրջանային կապերը կը պահուին Կեդրոնական վարչութեան գիտութեամբ:

Յօդ. 12.18 - Շրջանային վարչութիւնը կը նշանակէ յանձնախումբեր՝ յատուկ աշխատանքներ վարելու համար:

Յօդ. 12.19 - Շրջանային վարչութեան կողմէ կեանքի կոչուած յանձնախումբերը իրենց աշխատանքի ծրագիրը մշակելէ ետք, պարտին զայն ներկայացնել Շրջանային վարչութեան՝ առ ի վաւերացում:

13. ՊԱՏԳԱՄԱԻՈՐԱԿԱՆ ԺՈՂՈՎ

Յօդ. 13.1 - Պատգամաւորական Ժողովը Համազգայինի գերագոյն ժողովն է: Անոր որոշումները պարտադիր են Համազգայինի բոլոր ժողովներուն, մարմիններուն եւ անդամներուն համար: Կը գումարուի չորս տարին անգամ մը:

Յօդ. 13.2 - Պատգամաւորական ժողովին իրաւասու ձայնով կը մասնակցին՝

13.2.1 - Շրջաններու պատգամաւորները.

13.2.2 - Մեկուսի Կազմերու պատգամաւորները.

13.2.3 - Շրջանային Վարչութիւններու ներկայացուցիչները.

13.2.4 - Կեդրոնական Վարչութեան ներկայացուցիչը.

13.2.5 - ՀՅԴ Բիւրոյի ներկայացուցիչը:

Յօդ. 13.3 - Պատգամաւորական ժողովին ի պաշտօնէ եւ խորհրդակցական ձայնով կը մասնակցին Կեդրոնական Վարչութեան մնացեալ անդամները, անոր կապուած հաստատութիւններուն տնօրէնները կամ պատասխանատուները եւ գրասենեակներու գործադիր տնօրէնները:

Յօդ. 13.4 - Պատգամաւորական ժողովին խորհրդակցական ձայնով կը մասնակցին նաեւ իրաւասու ձայնով մասնակցողներու թիւին մէկ երրորդին համեմատութեամբ անդամներ, որոնք կը հրաւիրուին Կեդրոնական Վարչութեան կողմէ՝ հիմնուելով Շրջաններէ եւ Մեկուսի Կազմերէ եկած առաջարկներու վրայ: Կեդրոնական Վարչութիւնը կրնայ խորհրդակցական ձայներու թիւին կէսը իր կողմէ նշանակել:

Յօդ. 13.5 - ՀԱՄԱԶԳԱՅԻՆԻ անդամ մը կրնայ հետեւիլ Պատգամաւորական ժողովին, իբր ունկնդիր, Կեդրոնական վարչութեան գիտութեամբ:

Յօդ. 13.6 - Պատգամաւորական ժողովին մասնակցող պատգամաւորներուն թիւը կը ճշդուի հետեւեալ ձևով.

13.6.1 - Մինչեւ 150 անդամի համար՝ 1 պատգամաւոր

13.6.2 - 151-էն 300 անդամի համար՝ 2 պատգամաւոր

13.6.3 - 301-էն 450 անդամի համար՝ 3 պատգամաւոր

13.6.4 - 451-էն 600 անդամի համար՝ 4 պատգամաւոր

13.6.5 - 601-էն աւելի անդամի համար՝ 5 պատգամաւոր

Յօդ. 13.7 - Շրջանի մը պատգամաւորները կ'ընտրուին Շրջանային ժողովին կողմէ, իսկ Մեկուսի Կազմի պատգամաւորը՝ Կազմի ընդհանուր ժողովին կողմէ:

Յօդ. 13.8 - Բանաւոր պատճառաւ բացակայող պատգամաւորներ փոխարինելու համար նոյն ժողովները կ'ընտրեն նաեւ առաւելագոյնը երկու պատգամաւոր:

Յօդ. 13.9 - Շրջաններու ու Մեկուսի Կազմերու պատգամաւորները եւ Շրջանային վարչութիւններու ներկայացուցիչները իրենց հետ պէտք է ունենան զիրենք ընտրող ժողովին կամ մարմնին կողմէ տրուած լիազօրագիր:

Յօդ. 13.10 - Պատգամաւորական ժողովը կ'որոշէ պատգամաւորներու ժողովին իրաւասու կամ խորհրդակցական ձայնով մասնակցելու իրաւունքը, որ պայմանաւորուած է Շրջաններու եւ Մեկուսի Կազմերու նիւթական պարտաւորութեանց կատարումով:

Յօդ. 13.11 - Պատգամաւորական ժողովը օրինաւոր կը նկատուի, երբ՝

13.11.1 - Ներկայ է Շրջաններու եւ Մեկուսի Կազմերու պարզ մեծամասնութիւնը.

13.11.1 - Ներկայ է Շրջաններու եւ Մեկուսի Կազմերու իրաւասու ձայնով պատգամաւորներու պարզ մեծամասնութիւնը:

Յօդ. 13.12 - Պատգամաւորական ժողովին պատգամաւոր կրնայ ընտրուիլ եւ կամ խորհրդակցական ձայնով հրաւիրուիլ՝ առնուազն երեք տարի ՀԱՄԱԶԳԱՅԻՆԻ մաս կազմած անդամ մը: Այս յօդուածը չի վերաբերիր այն նորակազմ Շրջաններուն կամ Մեկուսի Կազմերուն ուր սոյն պայմանները լրացնող անդամներ չկան:

Յօդ. 13.13 - Պատգամաւորական ժողովը կը տանի հետեւեալ աշխատանքները.

13.13.1 - Կ'ընտրէ իր դիւանը եւ բանաձեւի, հաշուեքննիչ, արխիւային թուղթերու քննիչ եւ քուէախոյզ յանձնախումբերը, որոնց իրաւասութիւնները կ'աւարտին ժողովի փակումին.

13.13.2 - Կը քննէ, Շրջաններու եւ Մեկուսի Կազմերու գերագոյն ժողովներու կողմէ վաւերացուած ամփոփ տեղեկագիրները եւ կը հանէ համապատասխան բանաձեւ.

13.13.3 - Կը քննէ եւ կը գնահատէ Կեդրոնական վարչութեան եւ անոր ենթակայ հաստատութիւններու բարոյական եւ նիւթական տեղեկագիրները.

13.13.4 - Կը ճշդէ Միութեան յառաջիկայ ժամանակաշրջանի գործունէութեան ուղեգիծը.

13.13.5 - Կը կազմէ Կեդրոնական վարչութեան նախահաշիւը եւ կը կատարէ Շրջաններու եւ Մեկուսի Կազմերու վրայ ցենզի բաշխումը.

13.13.6 - Ի հարկին կը վերամշակէ Համազգայինի Ընդհանուր Կանոնագիրը.

13.13.7 - Կը քննէ եւ կը լուծէ Շրջանի մը կամ Մեկուսի Կազմի մը մէջ առկախ մնացած հարցերը.

13.13.8 - Կընտրէ Կեդրոնական Վարչութիւն:

Յօդ. 13.14 - Արտակարգ Պատգամաւորական ժողով կրնայ գումարուիլ`

13.14.1 - Կեդրոնական Վարչութեան հրաւերով.

13.14.2 - Շրջաններու եւ Մեկուսի Կազմի պարզ մեծամասնութեան առաջարկով.

13.14.3 - ՀՅԴ Բիւրոյի հրաւերով:

14. ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹԻՒՆ

Յօդ. 14.1 - ՀԱՄԱԶԳԱՅԻՆԻ գործադիր գերագոյն մարմինն է Կեդրոնական վարչութիւնը:

Յօդ. 14.2 - Կեդրոնական Վարչութիւնը կը վարէ ՀԱՄԱԶԳԱՅԻՆԻ ընդհանուր գործունէութիւնը` սոյն կանոնագրի տրամադրութեանց եւ Պատգամաւորական ժողովի որոշումներու սահմաններուն մէջ:

Յօդ. 14.3 - Կեդրոնական Վարչութիւնը կընտրուի Պատգամաւորական ժողովին կողմէ, գաղտնի քուէարկութեամբ եւ ձայներու պարզ մեծամասնութեամբ:

Յօդ. 14.4 - Կեդրոնական Վարչութիւնը կը բաղկանայ 7, 9 կամ 11 անդամէ, ընտրուած չորս տարուան համար: Կեդրոնական Վարչութեան անդամները ընտրելի են ոչ աւելի քան երկու յաջորդական անգամներ:

Յօդ. 14.5 - Կեդրոնական Վարչութեան անդամ կրնայ ընտրուիլ առնուազն չորս տարի ՀԱՄԱԶԳԱՅԻՆԻ մաս կազմած անդամ մը:

Յօդ. 14.6 - Կեդրոնական Վարչութեան դիւանը կը բաղկանայ ատենապետէ մը, փոխ-ատենապետէ մը, ատենադպիրէ մը եւ գանձապահէ մը:

Յօդ. 14.7 - Կեդրոնական Վարչութեան կը պատկանի ՀԱՄԱԶԳԱՅԻՆԻ Ընդհանուր Կանոնադիրին եւ Պատգամաւորական ժողովի որոշումներուն մեկնաբանութեան իրաւունքը եւ գործադրութեան հսկողութիւնը:

Յօդ. 14.8 - Միայն Կեդրոնական Վարչութիւնը կրնայ համահայկական ձեռնարկներ կազմակերպել, Շրջաններու գործակցութեամբ:

Յօդ. 14.9 - Կեդրոնական Վարչութիւնը կը գործէ մասնագիտացած յանձնախումբերու եւ ինսամակալութեանց դրութեամբ, որոնց ժամանակաշրջանը կաւարտի Կեդրոնական վարչութեան ժամանակաշրջանի աւարտին:

Յօդ. 14.10 - Կեդրոնական Վարչութեան ենթակայ յանձնախումբերն են, ի միջի այլոց.

14.10.1 - Կրթական ինսամակալութիւնները, որոնք կը զբաղին Կեդրոնական Վարչութեան ենթակայ կրթական բոլոր հաստատութիւններու ուսումնական, տնտեսական եւ կազմակերպչական հարցերով, տնօրէններուն կամ պատասխանատուներուն հետ գործակցաբար.

14.10.2 - Տպագրական, գրատարած եւ հրատարակչական յանձնախումբերը, որոնք կը հսկեն գիրքերու եւ պարբերաթերթերու տպագրութեան, սպառման եւ տպարանի ու գրախանութի գործառնութեանց վրայ, կը պատրաստեն հրատարակելի գործերու պարբերական ծրագիրները, պատրաստել կու տան նոր դասագիրքեր.

14.10.3 - Տնտեսական եւ հիմնադրամի յանձնախումբերը, որոնք կը զբաղին ՀԱՄԱԶԳԱՅԻՆԻ շարժուն ստացուածքներու շահարկմամբ եւ մշակութային- կրթական հիմնադրամներու յանձանձումով, ու կը հսկեն հաշուապահական աշխատանքներուն:

14.10.4 - Կալուածոց յանձնախումբը, որ կը զբաղի ՀԱՄԱԶԳԱՅԻՆԻ պատկանող անշարժ գոյքերու յանձանձումով՝ առուծախ, խնամք, հաշուեկշիռ, եւ այլն, Կեդրոնական վարչութեան հաստատումով:

Յօդ. 14.11 - Կեդրոնական Վարչութեան ներկայացուցիչը կրնայ մասնակցիլ Շրջանային վարչութիւններու եւ Մեկուսի Վարչութիւններու ժողովներուն՝ խորհրդակցական ձայնով:

Յօդ. 14.12 - Որեւէ պատճառով Կեդրոնական Վարչութենէն դադրող անդամ մը փոխարինելու համար, Կեդրոնական Վարչութիւնը իր կազմը կամբողջացնէ ըստ իր հայեցողութեան եւ ՀՅԴ Բիւրոյի հաւանութեամբ:

Յօդ. 14.13 - Կեդրոնական Վարչութիւնը իրաւասու է, իր որոշումով կամ Շրջանէ մը կամ

Մեկուսի Կազմէ մը եկած պահանջին հիման վրայ, յատուկ լիազօր ներկայացուցիչներ ուղարկելու՝ Շրջանային Վարչութեանց Մեկուսի Վարչութեանց բարոյական եւ նիւթական գործունէութիւնը քննելու, ներքին խնդիրները կարգադրելու եւ անոնց ուղղութիւն տալու համար:

Յօդ. 14.14 - Կեդրոնական Վարչութիւնը, բացառիկ պարագաներու, իրաւասու է լուծելու Շրջանային կամ Մեկուսի Վարչութիւն մը եւ առաջացնելու նշանակովի վարչութիւն, որ կը գործէ առաւելագոյնը մէկ տարի:

Յօդ. 14.15 - Կեդրոնական Վարչութիւնը կը մշակէ իր պատասխանատուութեան տակ գործող կրթական, հրատարակչական եւ այլ յանձնախումբերու եւ խնամակալութիւններու ներքին կանոնադիրները:

Յօդ. 14.16 - Կեդրոնական Վարչութեան ենթակայ կրթական հաստատութիւններու տնօրէնները կը նշանակուին Կեդրոնական Վարչութեան կողմէ, ՀՅԴ Բիւրոյի հաւանութիւնը ստանալէ ետք:

Յօդ. 14.17 - Այն երկիրներուն մէջ, ուր Շրջանային կամ Մեկուսի Վարչութիւն չկայ, Կեդրոնական Վարչութիւնը կրնայ յառաջացնել Մասնաճիւղեր, որոնք կապուած կըլլան ուղղակի իրեն: Նման Մասնաճիւղեր իրենց առաջարկները կրնան դրկել Պատգամաւորական Ժողովին՝ Կեդրոնական Վարչութեան խողովակով:

15. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԿԱՆՈՆՆԵՐ

Յօդ. 15.1 – ՀԱՄԱԶԳԱՅԻՆի որեւէ անդամ չի կրնար միաժամանակ գտնուիլ հաշուետուի եւ հաշուառուի դիրքին մէջ՝ իր պատկանած մարմնին նկատմամբ:

Յօդ. 15.2 – Վարչութեան կամ յանձնախումբի անդամ մը, երբ այդ վարչութեան կամ յանձնախումբի որեւէ գործարքէն կրնայ անձնական շահ մը ունենալ՝ պարտի այդ մասին կանխաւ տեղեակ պահել տուեալ մարմինը:

Յօդ. 15.3 - Նախորդ յօդուածին մէջ յիշուած վարչականը վերոյիշեալ գործառքին քննարկման չի կրնար մասնակցիլ:

Յօդ. 15.4 - Վարչութիւն մը ինքնաբերաբար լուծարուած կը համարուի, երբ կը կորսնցնէ իր անդամներու մեծամասնութիւնը. նման պարագայի, վերադաս վարչութեան կողմէ ու յատուկ մարմնի մը նշանակումով, անմիջապէս կը հրաւիրուի համապատասխան ժողովը՝ նոր վարչութիւն ընտրելու համար:

Յօդ. 15.5 - Մարմնի մը լուծարման որոշումը կը տրուի վերադաս վարչութեան երկու երրորդի մեծամասնութեան ձայնով: Լուծարման ենթակայ մարմնին կը տրուի նախապէս

պաշտպանություն առիթ: Կարգապահական այս տնօրինումին դեմ կարելի է բողոքել վերադաս մարմնին կամ ժողովին՝ որոշումի հաղորդման օրեն մինչև երկու ամիս:

Յօդ. 15.6 - ՀԱՄԱԶԳԱՅԻՆԻ հանդեպ հակականոնագրական վիճակի մեջ գտնուող մեկ անդամին դադրեցման որոշումը նոյնպես կը տրուի վարչութեան երկու երրորդի մեծամասնութեան ձայնով, ենթակային տալով նախապես պաշտպանություն առիթ: Կարգապահական այս տնօրինումին դեմ կարելի է բողոքել վերադաս մարմնին կամ ժողովին՝ որոշումի հաղորդման օրեն մինչև երկու ամիս:

Յօդ. 15.7 - Վերոյիշեալ կարգապահական որոշումներուն դեմ ներկայացուած բողոքները պետք է տնօրինուին բողոքի ներկայացուած թուականէն մինչև երկու ամիս:

Յօդ. 15.8 - Վարչութեան մը բոլոր անդամները պատասխանատու են վերադաս ժողովին:

Յօդ. 15.9 - Վարչութիւնները չեն կրնար իրենց գանձէն որեւէ փոխատուութիւն ընել ուրիշ անհատի կամ անդամի:

Յօդ. 15.10 - Վարչութիւն մը կրնայ ՀԱՄԱԶԳԱՅԻՆԻ անունով փոխատուութիւններ կատարել, միայն այն պարագային, երբ այդ փոխատուութիւնները պիտի գործածուին միութեան նպատակներուն համար, եւ այդ՝ վերադաս մարմնի հաւանութեամբ:

Յօդ. 15.11 - Հիմնադրամներէ գոյացած գումարները պետք է գործածուին իրենց նպատակին համար միայն:

Յօդ. 15.12 - Վարչութիւնները պարտաւոր են համապատասխան ժողովներու վաւերացուցած նախահաշիւի սահմաններուն մէջ գործել:

16. ՀԱՇՈՒՍԿԱՆ

Յօդ. 16.1 - Վարչութիւնները պարտաւոր են իրենց հաշիւները պահել կանոնաւոր եւ օրինաւոր հաշուապահութեամբ:

Յօդ. 16.2 - Ամէն մարմին պարտաւոր է պահել մուտքի եւ ելքի համապատասխան փաստաթուղթեր, կանոնաւոր կերպով:

Յօդ. 16.3 - Վարչութեան գանձումները կը պահուին դրամատունը՝ ՀԱՄԱԶԳԱՅԻՆԻ հաշուեհամարին, իսկ վճարումները կը կատարուին վճարագրով (չէք)՝ վարչական երեք իրաւասու անդամներէ երկուքին (բայց ոչ հաշուապահ(ստորագրութեամբ, եւ համապատասխան փաստաթուղթերու հիման վրայ):

Յօդ. 16.4 - Ընթացիկ ծախսերու համար գանձապահին մօտ մնացող գումարը կը ճշդուի

վարչութեան կողմէ:

Յօդ. 16.5 - Կեդրոնական, Շրջանային ու Մեկուսի Կազմի վարչութիւններու հաշուեկշիռները պէտք է պատրաստուած ըլլան հաշուետուզիչ (audit) սպասարկութեան կողմէ:

Յօդ. 16.6 - Ժողովներու կողմէ ընտրուած հաշուեքննիչ մարմինները հաշուեքննութիւնը կը կատարեն ըստ էութեան:

Յօդ. 16.7 - Վարչութեան մը տնտեսական տարեշրջանը կը ճշդուի վերա-դաս ժողովին կողմէ:

Յօդ. 16.8 - Ամէն վարչութիւն պարտաւոր է գանձած գումարին համար տալ համապատասխան ստացագիր՝ գանձապահի ստորագրութեամբ:

Յօդ. 16.9 - Վարչութեան ծախսերը կը կատարուին միայն վարչութեան ժողովի որոշումով եւ համապատասխան արձանագրութեամբ:

Յօդ. 16.10 - Վարչութիւնը պարտի իր հաշիւները վերադաս մարմնին ներկայացնել իր ժամանակաշրջանի աւարտին:

17. ԿԱՆՈՆԱԳՐԱՅԻՆ ՓՈՓՈԽՈՒԹԻՒՆՆԵՐ

Յօդ. 17.1 - Միայն Պատգամաւորական ժողովը իրաւասու է սոյն Ընդհանուր Կանոնագիրը փոփոխութեան ենթարկելու, պայմանաւ որ՝

17.1.1 - Մասնաճիւղերու, Մեկուսի Կազմերու եւ Շրջաններու կողմէ բխած կանոնագրային փոփոխութեան առաջարկները ներկայացուին Կեդրոնական վարչութեան՝ Պատգամաւորական ժողովէն առնուազն վեց (6) ամիս առաջ.

17.1.2 - Իսկ Կեդրոնական Վարչութիւնը Շրջաններու եւ Մեկուսի Կազմերու ժողովներու քննութեան յանձնած ըլլայ փոփոխութեան առաջարկները Պատգամաւորական ժողովէն առնուազն չորս)4(ամիս առաջ:

Յօդ. 17.2 - Ընդհանուր Կանոնագրին մէջ փոփոխութիւնները կը կատարուին ձայներու երկու երրորդի մեծամասնութեամբ:

ՅԱԻԵԼՈՒԱԾ

ԺՈՂՈՎԱՎԱՐԱԿԱՆ ԿԱՆՈՆՆԵՐ

Յօդ. 1 - Վարչութեան մը ժողովը օրինաւոր կը համարուի երբ կը գումարուի իր անդամներու պարզ մեծամասնութեան ներկայութեան, այլապէս կը դառնայ խորհրդակցական:

Յօդ. 2 - Վարչութեան մը որոշումները կ'առնուին միայն օրինաւոր ժողովի ընթացքին եւ ներկայ ձայներու պարզ մեծամասնութեամբ:

Յօդ. 3 - Վարչութեան դիւանը կը բաղկանայ ատենապետէ, ատենադպիրէ, հաշուապահէ ու գանձապահէ: Այս չորս պաշտօնները կը վարեն չորս տարբեր անդամներ:

Յօդ. 4 - Պարզ կամ բացարձակ մեծամասնութիւն կը նշանակէ ներկայ քուէարկողներու կէսէն աւելին:

Յօդ. 5 - Քուէարկութեան մէջ ճերմակ քուէները (ձեռնպահները) ընդհանուր հաշուին մէջ չեն առնուիր, բայց եթէ պատահի որ ձեռնպահներուն թիւը քուէարկողներու թիւէն աւելի ըլլայ, խնդրոյ առարկայ որոշումը ինքնաբերաբար վերաքննելի կը նկատուի: Երեւոյթը կրկնուելու պարագային, հարցը դուրս կը բերուի օրակարգէն եւ կը փոխանցուի վերադաս ժողովին կամ վարչութեան տնօրինումին:

Յօդ. 6 - Անդամի մը կողմէ եղած որեւէ առաջարկ քուէարկութեան դրուելէ առաջ պէտք է երկրորդուի: Վարչութեան կամ յանձնախումբերու կողմէ եկող առաջարկները երկրորդուած կը նկատուին: Ժողովի ատենագրութեան մէջ կ'արձանագրուին թեր եւ դէմ քուէներու թիւերը:

2016-06-01